**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 01**
**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՄԱՐԻԿ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ**
**ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

**15 փետրվարի 2016թ.**

Ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին> ՀՀ օրենքի $77^{1}$ - $77^{6}$ հոդվածների պահանջներով, ինչպես նաև հիմք ընդունելով ՀՀ Կոտայքի մարզպետի 2016 թվականի հունվարի 21-ի N 13-Ա որոշումը և մարզպետարանի աշխատակազմի ղեկավարի 2016 թվականի հունվարի 29-ի N 16-Ա հրամանը՝ ս. թ. փետրվարի 09-ից մինչև 11-ը ներառյալ.

ՀՀ Կոտայքի մարզպետարանի **(**վարչական հսկողություն իրականացնող աշխատանքային խումբը**)** աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետ Հարություն Ալեքսանյանի **(**աշխատանքային խմբի ղեկավար**)**, նույն վարչության՝ ՏԻ և ՀԾ հարցերի բաժնի առաջատար մասնագետ Ռոբերտ Թումոյանի, աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ Սեդա Բաղդասարյանի, աշխատակազմի քաղաքաշինության վարչության բնակարանային և ենթակառուցվածքների գործունեության բաժնի պետ Արամ Վիրաբյանի, աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետի տեղակալ Կամո Թումոյանի, աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ Արմեն Վարդանյանի, աշխատակազմի հողաշինության և հողօգտագործման բաժնի-մարզային հողային պետական տեսչության առաջատար մասնագետ Հակոբ Հովսեփյանի **(**աշխատանքային խմբի անդամներ**)** կողմից իրականացվեց վարչական հսկողություն

-արտակարգ իրավիճակների (հավելված 1),

-առևտրի և ծառայությունների (հավելված 2),

-բնապահպանության (հավելված 3),

-ընդերքօգտագործման (հավելված 4),

-անասնաբուժության, բուսասանիտարիայի և սննդամթերքի անվտանգության (հավելված 5),

-հողօգտագործման (հավելված 6),

-կրթության (հավելված 7),

-մշակույթի (հավելված 8),

-պաշտպանության (հավելված 9),

-սոցիալական պաշտպանության (հավելված 10),

-ֆիզիկական կուլտուրայի և սպորտի (հավելված 11),

-տրանսպորտի և կապի (հավելված 12),

-ոստիկանության ոլորտում տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության նկատմամբ (հավելված 13),

-առողջապահության (հավելված 14),

-քաղաքաշինության (հավելված 15),

-տեղական ինքնակառավարման մարմինների պարտադիր լիազորությունների մի շարք (հավելված 16) բնագավառներում ՀՀ Կոտայքի մարզի Մարմարիկ համայնքում:

1.Վարչական հսկողության արդյունքների ամփոփման արդյունքում կազմվեց սույն արձանագրությունը կից հավելվածներով (1-16) ներկայացված՝ հայտնաբերված խախտումների, հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումների վերացման ուղղությամբ առաջարկությունների, ինչպես նաև հայտնաբերված խախտումների վերացման նպատակով առաջարկվող ժամկետների վերաբերյալ:

2. Առաջարկությունները նշված ժամկետում չկատարելու դեպքում այն կբողոքարկվի դատական կարգով՝ ՀՀ օրենսդրությանը համապատասխան:

3.Վարչական հսկողության արդյունքների և վարչական հսկողությունը իրականացնող պաշտոնատար անձանց գործողությունների վերաբերյալ առարկություններ և առաջարկություններ չունեմ՝ Մարմարիկ համայնքի ղեկավար Արտակ Պետրոսյան:

4. Արձանագրությունը կազմված է երկու օրինակից, որից մեկ օրինակը ներկայացվել է ՀՀ Կոտայքի մարզի Մարմարիկ համայնքի ղեկավարին:

**Աշխատանքային խումբ՝**

ղեկավար՝ Հ. Ալեքսանյան

անդամներ՝ Ռ. Թումոյան,

Ս. Բաղդասարյան,

Ա. Վարդանյան,

Ա. Վիրաբյան,

Կ. Թումոյան,

Հ. Հովսեփյան,

Մարմարիկ համայնքի ղեկավար Ա. Պետրոսյան: